

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


2323

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.  
цена 10 коп.

# ՄԵՆՔ ՀՏԾՈՒՄ ԵՆք

(ԽԱՏԵՐՎԵՆՑԻԱՅԻ ԱՐԺԵՔԸ)

ԹԱՐԳԱ. թ. 4.



30 MAY 2011

2323

Գ. ԱՆՌԴՅԱՆ

Թարգմ. Թ. Վ.

9(47)

Բ 55

24 JAN 2006

## ՄԵՆՔ ՀԻՇՈՒՄ ԵՆՔ

Խորհրդային յերկրի ամեն մի աշխատավոր պիտի գիտենա և հիշե այն զինված ինտերվենցիայի<sup>\*)</sup> մասին, վորը մենք ապրեցինք 1918.20 թ.թ.

Տիրող, շահագործող դասակարգերը միշտ ել պատերազմ են վարել այն յերկրների դեմ, վորածել հաղթանակել ե հեղափոխությունը, ինտերվենտների հետ միշտ ձեռ-ձեռի տված գործել են հակածեղափոխական եմիգրանտներն ու առհասարակ ժողովրդի թշնամիները։ Այդպես եր յեղել 140 տարի սրանից առաջ, 1790 թվին, յերբ հեղափոխությամբ յերկրից արտաքսված ֆրանսիական մօնարխիստները յելքողական մյուս թագավորներից ոգնություն ելին աղերսում։

Այդպես եր 1848-49 թվին, յերբ ոռուսական նիկոլայ 1-ին թագավորը իր զորքով գնաց խեղդելու հունգարական հեղափոխությունը, այդպես եր և 1871 թ., յերբ գերմանական զորքերը ոգնեցին ֆրանսիայի բուրժուազիային խեղդելու Փարիզյան Կոմունան։ Այդպես եր և 1905 թվին, յերբ ֆրանսիական բանկերը փրկեցին նիկոլայ II-ին, տալով նրան փոխառություն զորքի և վոստիկանության ոռմիկները վճարելու և վարձու միջոցներով հեղափոխությունը խեղդելու։

Այդպես եր, վերջապես, և 1919 թվին, յերբ ոռումանական զորքերը ոգնեցին վենցրիայում խեղդելու խորհր-

<sup>\*)</sup> Սկզբունքի համար—միշտամություն, Զինված ինտերվենցիա—զինված միշտամություն, ճարճակում ինտերվենտը նա յե, ով վոր կազմակերպում է միշտամությունը ուրիշ պետության գործերի մեջ։

դայլին իշխանությունը իսկ Թրանսիբանմեծ աջակցություն ցուց տվեց ու մասնակից յեղավ Վենդրիայում նոր հականեղափոխական կառավարություն ստեղծելու:

Առևննեկ կատարված և այժմ Զինաստանում, վորտեղ խոշոր կապիտալիստական պետությունների գործերն ու նավատարրմիզը գնդակահարում են կարվածատերերի և գեներալների դեմ ապստամբած բանվորներին ու գյուղացիներին:

Ինչպես ունենում ենք, շահագործողները մեծ փորձառություն ունեն ինտերվենցիայի մեջ և այդ բոլոր պարունոտ փորձերը 1918-20 թվականներին նրանք գործադրուցին խորհրդային յերկրի դեմ:

### ՆԻԿԱՅ ՈՐԵՆՔԸ

«Ար յա աշխի զդայալ ՆԻԿԱՅ ՈՐԵՆՔԸ  
-րա 1918 թվին, Ան ծովի ափին գտնվող Ռդէսաքաղաքում, Փաբրիկատաները՝ ոֆիցերները, տերտերները, պոռնիկ հայաւուապավագոր ըրջանից»—Ժուռնալիստները և պոետները սպասում եին փրկիչների գայստյան, զօրոնք գալիս եին անզլիական ու Թրանսիբանմատվերուն: Մայիսակ գվարդիական բանակի դրամանատարը կոչ եր անում հասարակությանը «սըրդագին և ուրախ պիտակություն ցույց տալ հյուրերից»: Կադետների «Ռեսուլի» թերթը արշինաչափ աբաների տպեց «բարի գայուսու»: Հյուրերն իրենք ևս դիմեցին համարելությանը ճետելու կոչով: «մենք յենի ենք Խցկանատան կարդ հաստատելու ու ազատելու հրան համարակող բուժենիկների իշխանությունից: Ռուսական մատուցության երեմնաները, բոլշևիկները ու երանց մատուցության հայարարվում են որենքից դուրս»:

Թնդանութների ու գնդացիքների համար միասին հյուրերը բերում ենին իրենց որենքառաջիկ հրենքի իմաստը շատ պարզ են՝ ողովական մատանիքներին, գործարաններն ու այլքայլ համար ամենամասն առաջանական առաջարարվում են դժբանաբան դակ ին և առ ցամբիզման հարացած և առաջարարվում են այլ վայ:

Չմն պահանջանք առկա պատճեն չի կատարվում:

ու բանկերը՝ կապիտալիստներին, իսկ բանվորներին և գյուղացիներին՝ մահ և ստրկություն:

ՆՐԱՆՑ «ԿԱՐԳԸ», «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ».

1919 թ. մարտի 28-ի գիշերը Թեոդոսիայում գնդակահարվեցին 26 բանվոր: Զնայած աիրող տերորին ու մենշևիկների հորդորներին, այնուամենայնիվ գործարաններում սկսվեց հուզմունքը, իմանալով այդ մասին, ֆրանսիացիք ուղարկեցին ականավ, վորի հրամանատար կապիտան Բենետը արձակեց հետեւյալ հրամանը. «որինական կարգին» չհպատակվողներին, «մենք պահանջում ենք վոր կարգը քաղաքում և ըրջանում չխանգարվի, մենք չենք թույլ տա վոչ մի անկարգություն և յեթե մեր հպատակներից, կամ մեր հովանավորության տակ գտնվողներից մեկն ու մեկը տուժի, մեղավորը իսկույն կզնդակահարվի. մենք ունենք մեզ հարգել տալու բոլոր միջոցները»:

Ֆրանսիական ոֆիցեր Լանցոնը այս անգամ իբրև զոհ ընարեց Խերսոն քաղաքը: Հյուախից առաջ եր շարժվում կարմիր բանակը. Խերսոնի բանվորները պատրաստվում երին ողնելու նրան: Լանցոնը արձակեց հետեւյալ հրամանը.

«Ով վոր քաղաքում կրակ բաց անի գաշնակից զորքերի վրա, կամ թե թույլ տա թշնամական վերաբերմունք, ինչպես որինակ՝ հեռագրական կամ հեռախոսային գծի խանգարում, կամ բնակչության մոտ զենք գտնվի, այդ գեղգում հրամանատարը կկարգադրի ումբակոծել քաղաքի այն մասը, զորտեղ կկատարվին պատերազմական գործողությունները, և բացի այդ՝ պատանդներ կվերցնի: Քաղաքում պիտի տիրի նանգստություն: Կարգը խանգարողը տեղն ու տեղը կզնդակահարվի»:

Սակայն այդ չոգնեց: Կարմիր բանակը մոտենում եր. ֆրանսիական նավերում սկսվեց ապստամբություն.

մի մոմենտ ևս և թնդանոթները իրենց բերանները կը դարձնեյին գեղի թենետները և լանջոնները: Ինտերվենտները ստիպված յեղան իրենց կաշիները ազատելու համար շտապ փախչել բայց և այնպես, Խերանը չաղատվեց: Նախ քան հրաժեշտ տալը, ֆրանսիացին ու նրանց կամակատար-հունական ոֆիցերությունը քաղաքի փողոցներում մասսայական ջարդեր կազմակերպեցին: Մի քանի հարյուր մարդ կանանցով և յերեխաներով քշեցին մի մեծ շենք և ապա այրեցին այդ շենքը, իսկ ով դուրս եր փախչում, գնդակահարվում եր: Շենքում այրվեցին մոտավորապես 500 մարդ: Կենդանի մարդկանցից կազմված խարույկի մուխն ու բոցը բարձրացավ վերև: Այդպես ե վրեժ լուծում բուրժուան:

Սպիտակ գվարդիականները, չեխո-սլովակների սվինների ուժով գրավելով իշխանությունը Ուրալում և Սիբիրում, գործի դրին իրենց «որենքը» — գնդակ լել կախարդան: Ֆրանսիական կրթված գեներալ Ժանենի ու անգլիական գեներալ Նոկսի հրամանով վայրենի հոշոտմներ եյին կատարվում (նույն այդ գեներալ ժանենը, ինչպես հայտնի յե վաստարանների դատավարությունից, ներկայումս ել մասնակցում ե Խորհրդային Միության դեմ նոր հարձակումների նախապատրաստման):

Ողեսսայում ֆրանսիական ոֆիցերները ամեն որ ու գիշեր մահվան պատճի եյին յենթարկում տասնյակ բանվորների: 1919 թվի փերարվարին, յերկաթուղային բանվորներ Գորբատյուկ և Պրիշակը գնդակահարվեցին և նրանց դիակները կախվեցին կամուրջի վրա հետեւալ մակագրով: «ի խրած բոլցեվիլիկներին»:

Այդ բոլորը չփրկեց ինտերվենտներին: Հեշտ և սպանել մարդկանց, բայց անհնարին սպանել պրոլետարական հեղափախությունը: Թագնվելով հողի տակ հին քարահանքում, Ողեսսայի մոտ, բոլշևիկները կադ-

մակերպեցին գաղտնի տպարան և հրատարակեցին «Կոմունիստ» թերթը ոռւսերեն և ֆրանսերեն լեզուներով: Բանվորները և բանվորութիւնները, բոլշևիկ ազիտատորները գաղտնի կերպով ծանօթանում եյին ոտարյերկըյա զինվորների հետ ու մեծ հնարքներով անցնում մինչև անգամ զինվորական նավերը: Այդ գործը ղեկավարում եր հատուկ «ոտարյերկըյա կոլեգիան», վորկազմակերպված եր բոլշևիկական ընդհատակյա կոմիտեյի կողմից:

Ոտարյերկըյա զորքերի մեջ խլատումներ սկսվեցին. 1919 թվի փերվարին ֆրանսիական 23-րդ հետևակ գնդի բատալիոնը հրաժարվեց կռվել. մարտի 2-ին ապստամբեցին ֆրանսիական 176-րդ գնդից վեց ոստա, բայց միևնույն որը ինտերվենտներին հաջողվեց վերջապես յերեան հանել «ոտարյերկըյա կոլեգիան» 11 հոգուց բաղկացած. բոլոր 11 հոգին ել տեղն ու տեղը գնդակահարվեցին, վորոնց թվում նաև ֆրանսիական կոմունիստկա ընկ. Ժաննիա Լաբուրը:

Ինտերվենտները կարծում եյին, թե տերրորով կարող են վախեցնել վոչ միայն խորհրդային բանվորներին, այլ և իրենց նավաստիներին ու զինվորներին: Բայց վորքան ավելի եյին կատաղում դահճճները, այնքան աճում եր նրանց գեմ ատելությունը: Ապրիլին ֆրանսիական նավաստորմիղում սկսվեցին ապստամբությունները, վորի հետևանքով ստիպված յեղան հետ տանել նավերը, իսկ ապստամբներին ֆրանսիայում որենքի տվեցին և դատապարտեցին տաժանակիր աշխատանքների:

Ֆրանսիակոն բուրժուատ մարդասպաններից հետ չեյին մնում և անզիլացիք: Ասխաբադում (միջին Ասիա) անգլիական կոնտր-ռազմական առաջին գործն եր Բազիկի 26 լավագույն բոլշևիկներին, պրոլետարական Անդրկովկասի առաջնորդներին տանելը, վորոնց բոլորին ել Ախչա-կույմա ավագոտ անապատում ամենաս-

տոր կերպով թալանեցին, չարչարեցին և սպանեցին։ Այդ սոսկալի վոճիրի կազմակերպիչներն ելին անգլիական ոֆիցերները, «մեր» եսերների ու մենշևիկների հետ միասին։ Մեր յերկրի հյուսիսային ափերում, վորտեղ տիրում եյին անգլիացիները, քրանսիացիներն ու ամերիկացիները, Արխանգելսկից մինչև Մուրմանսկ կանգնած եյին կախաղաններ։ Այդպես եր նույնպես Ռուրայնայում, Պրիբալտիկում, ամեն տեղ, ուր վոտք եյին դնում ինտերվենտները. յերբ ինտերվենցիայի գոհերին աջակցող կոմիտեն սկսեց տեղեկություններ հավաքել տուժողներից, պարզվեց, վոր յերեք տարվա ընթացքում 1 միլիոն 335 հազար գանգատ ե տրված։ Ինչի մասին եյին հաղորդում այդ գանգատները. այն մասին, վոր՝

111 հազար մարդ սպանված ե,  
29 հազար մարդ—հաշմանդամ ե դարձել։

112 հազար մարդ ջարդվածներ ստացել, վոչնչացված ե 20 միլիոն ոռություն ցանք, վոչնչացված ու տարված ե 139 միլ. ոռություն անասուն. վառված են 69 միլ. ոռություն շինություններ և այն—ընդամենք 558 միլ. ոռություն Միայն Սիբիրում վոչնչացված ե 25 հազար դյուդացիական անտեսություն. իսկ ամբողջ յերկրում՝ հարյուր հազարավոր անտեսություններ։

Ահա քայլայման ու մահվան վոճիրի այդ սոսկալի հաշիվը։

### ԱՅՐՎՈՒՄ ԵՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ

«Պրոմպարտիայի» դատավարությունից հայտնի ե, վոր արտասահմանյան մասսարարության կոմանդիր ները հրամայում եյին Ռամզինին և նրա համախոհներին պայթեցնել, վառել մեր ձեռնարկությունները, այդ գործը նոր չե։ Խորհրդային գործարանների ավերակներով ու փատակներով եր ծածկվել բուրժուական գորքերի ամբողջ ճանապարհը։

Ռուրալում, Գումբեյսկի լեռնային շրջանում վոչնչացրին քիմիական ֆաբրիկան, Կիտլիմսկի շրջանում վառեցին ելեկտրոկայանը. Սիբիրում վառեցին Մարինսկի հանքերի շախտային շինությունները, Ռմբակոծեցին Բագուն, վորտեղ վոչնչացան 2 միլ. ոռություն տեխնիկական նյութեր։ Պրոզնում հրդեհը շարունակվում եր մի ամբողջ տարի—վասը հասնում է 102 միլ. ոռություն։ Քանդված է 417 աղյուսի գործարան։ Տրուցկ-Ռուսկ յերկաթուղագծի 380 կիլոմետր տարածությունից քանդված է 120 կիլոմետր. դրա հետ միասին՝ 80 վագոն և 12 շոգեկառք։ Քանդված է Մերեֆա-Խերսոն յերկաթուղագծի 543 կիլոմետր տարածությունը, նաև տոննելը, 200 վագոն և 10 շոգեկառք։

Դնեպր գետի հետախուզական աշխատանքների վայրում վառեցին բոլոր պահեստները և բանվորների տները։

Դոնբասում շարքից հանվել է ամբողջ կաթսաների համարյա կեսը. իսկ շախտերը՝ լցվել ջրով։ Ստորյերկրյա նոր մշակված անցքերը քանդված են ու հեղեղված։

Քանդված է 3.350 յերկաթե կամուրջներ, իսկ փայտե՝ 29 կիլոմետր։

Չեն ինայիւած հիվանդանոցներն, ամբուլատորիաները (միայն Սիբիրում ավերված ե 320 ամբուլատորիա), դպրոցները, գրադարաններն ու մանկական տըները. «Այրիք, կործանիք», — ահա այս եր ինտերվենտների լոգունգը։

Այս հաշիվը կարելի յե բերել գրքի հազարավոր յերեսների վրա։ Մի որ նրանք, յեթե վոչ փողով, ապա իրենց գլխով կփակեն այդ հաշիվերը։

Բայց ինտերվենտները, թե իրենք և թե սպիտակ գվաղդիականների ձեռով վոչ միայն այրում ու կործանում եյին ամեն ինչ, նրանք միենալույն ժամանակ և թալանում եյին։ Անդրկովկասում անգլիական զինվորա-

կան շտաբը ծախսելու արտահանել է մոտ 500 հազար տոնն (30 միլ. փութ) նավթամթերք և 430.000 տոնն մարդանեց (26 միլ. փութ): Արխագիտայից տարել են 830 տոնն թութուն (50 հազար փութ): 1919 թվին Դենիկինը «ընծայեց» Փրանսիային 5 հազար տոնն ցորեն և խոստացավ հետագայում տալ տասնապատիկ: 1919 թվին Փրանսիացիք, հեռանալով Սև ծովյան ափերից, իրենց հետ տարան 112 նավ, բարձած ապրանքով և թալանեցին Ողեսսայի, Նիկոլաեի և Սևաստոպոլի բոլոր պահեստները:

Դրիմում կառավարության գլուխ եյին կանգնած ոռու բուրժուազիայի փորձված «աղջասեր» կազետները: Դրիմից վոչ հեռու, յերբ փորոտում եյին Կարմիր բանակի թնդանոթները, աղջասեր մինիստրները պատրաստվում եյին փախչելու ծովի այն կողմը և արդեն իրենց կանանցով և չեմոդաններով տեղափորկել եյին նավում, բայց Փրանսիական ոֆիցեր Տրուսոնը հրամայեց նրանց «կանգ առնել»—վերադարձեց նրանց քաղաք և ստիպեց ստորագրել հետեւյալ ակտը—

### «Ա Կ Տ»

1919 թվի ապրիլի 12-ին կազմված եւ սույն ակտը, վորով Դրիմի յերկրային կառավարությունը հանձնում է Սևաստոպոլում գտնվող Փրանսիական իշխանություններին յերկրային բանկից դուրս բերած ամբողջ հարստությունը, նույնպես Սևաստոպոլի գանձատանը յեղած հարստությունը, ծախսելու ըստ իրենց հայեցողության»:

Այդպես եյին վարփում իմպերիալիստները և հարավում և ամենուրեք: Գրավելով Խորհրդային Հյուսիսը, անդիմացիները տարան ահազին չափով անտառանյութ, իսկ Փրանսիացիք միայն Արխանգելսկից 1918 թվին մի քանի ամսվա ընթացքում տարան 5 հազար տոնն

կտավատ, մեծ քանակությամբ ճակնդեղի սերմ, ֆաներա, մարդանեց, խիժ և այլն, ընդամենը 8 միլ. ոռություն վոսկով. չմոռացան տանել նույն իսկ 8 տոնն խոզի մաղ—չե վոր ամեն ինչ պետք կզա: Բացի դրանից, հյուսիսում ինտերվենաները ելեքտրական եներգիայից, ջրից և այլ բաներից ոգտվելուց ունեցին 2 միլ. պարտք, վորից և վոչ մի կոպեկ չվճարեցին: Կազան քաղաքում Կոլչակը յուրացրեց ամբողջ վոսկին և նահանջելով տարավ Սիբիր, իսկ այնտեղից, նրա բարեկամ դաշնակիցները այդ մի քանի միլիոն ոռություն վոսկին անցկացրին արտասահման—իրենց գրպանը դնելու: 1922 թվին ճապոնացիք հեռանալով Նիկոլաևից (Ա.մուրի վրա), թալանեցին ամբողջ քաղաքը, տանելով իրենց հետ նույնիսկ յերկաթե վառարանները ու յերկաթե և պղնձե առարկաները:

Թալանելով Բագուն, անգլիացիք չբավականացան միայն նավթով. հարյուրավոր սայլեր, ավտոմոբիլներ և նույնիսկ ուղետեր բարձած թալանված անհաշիվ բարիօնի, քշեցին տարան իրենց հետ. այդ իրերի մեջ կային դործարանի ստանոկներ և գործիքներ, մանուֆակտուրա, մթերք և 80 հակ գորգ, յուրաքանչյուրում 30—40 հատ. չե վոր անգլիացի աիկիններն ու պարոնները շատ են սիրում արևելյան գորգեր:

Ինտերվենցիայի հասցրած վասար հաշված ե, թե՛ռ դեռ վոչ լրիվ. նա հավասար է 39 միլիարդի (յերեսուն իննը հազար միլիոն): Դա հինգ հարյուր Վոլխովսրոյների արժեք է:

### Ի՞նչ եթին ՈՒԶՈՒՄ ՆՐԱՆՔ

Զինված ինտերվենցիայի հիմնական նպատակներ տապալել խորհրդային իշխանությունը. դրա համար ել «հյուրերն» այդպես առատ մատակարարում ու զինում է ին մեր սպիտակ գվարդիականներին: Առանց այդ բա-

ըեկամական ոգնության սպիտակ գվարդիականները չեյին կարող զիմանալ նույն իսկ մի քանի ամիս:

Միայն Անգլիան Բաթում—Բագու գծի վրա պահում եր տասնյակ հազարավոր զինվորներ: Ճապոնացին Սիբիր ուղարկեցին հարյուր հազարանոց բանակ: Արխանգելսկի նահանգում ամերիկական զինվորները յերկար ամիսների ընթացքում մնացել եյին ձյան մեջ: Հետագայում մի ամերիկացի հայտնում եր հետեւյալը: — «Զըմեռային չարագուշակ գիշերները մենք գնդականարում եյինք ոռու զյուղացիներին ու այրում ոսների տները»: Քրանսացին ավելի եյին գերադասում հարավը: սակայն նրանց գեներալները յեղել են ամեն Տեղի—Սիբիրում, Հյուսիսային և արևմտյան մասերում: Դրանք եյին պատերազմի կազմակերպիչները:

Ինտերվենտները իրենց գլխավոր հույսը դնում եյին վոչ թե իրենց, այլ սպիտակ գվարդիական բանակի վրա: Միայն 1919 թվի մայիս ամսին Անգլիան ուղարկեց Դենիկինին ու Կոլչակին 100-ական սավառնակ, իսկ Ֆրանսիան տվեց Կոլչակին 126 սավառնակ, 900 գնդացիր, 422 թնդանոթ: Անհաշիվ եր թնդանոթների, գնդացիրների, հրացանների և ռազմամթեղծների քանակը, ծախսում եյին նաև խոշոր գումարներ: Ինտերվենցիան Անգլիային նատեց մոտավորապես 140 միլ. ֆունտ ստերլինգ (մոտ 1.450 միլ. ռուբլի վոսկով):

Միայն Սիբիրի սպիտակ գվարդիականների վրա ժողովրդական փողերից Ֆրանսիան ծախսում եր ամսական մոտ 50 միլ. ֆրանկ (3 և կես միլ. ռ. վոսկով):

Ինտերվենտները սպիտակ գվարդիականներին իրենց կամակատարներն եյին համարում: Գեներալ Յուլենիչը պատրաստվում եր արշավելու սլորետարական Պետրոգրադի վրա, բայց նրան հարկավոր եր անգլիական բուրժուազիայի ոգնությունը. այդ ոգնությունը խոստացավ անգլիական գեներալ Մարչը, պայմանով միայն, յեթե կազմվի այնպիսի կառավարություն, վորը ցան-

կալի լինի անգլիացիներին: Կարծում եք ոռուս գեներալները վիրավորվեցին: Ահա Յուլենիչի հեռագիրը-Կոլչակին (18 ոգոսառուի 1919):

«Գեներալ Մարչը ցուցակով հրավիրեց իր մոտ 12: մարդ և հայտարարեց նրանց, վոր նրանք առանց սենյակից դուրս գալու, 40 բոպեյից հետո կազմեն կառավարություն»:

Եվ նրանք կազմեցին: Ոռուս գեներալների ու միշնիստների լերեմներին թքում եյին, իսկ նրանք ասում եյին՝ «դա աստվածային ցող ե»: Թող հրամայի ով ուղում ե, — լինի դա անգլիացին, Փրանսիացին, ճապոնացին, — միայն թե ողնեն տապալելու խորհրդային իշխանությունը:

Ինտերվենտները «իրենց փողի» համար ուղում եյին ստանալ վոչ միայն նրա արժեքը, այլ և ավելին. Ի՞նչ եյին ուղում նրանք, առաջին՝ վոչնչացնել բանվորական դիկտատուրան: Խորհրդային իշխանությունը վոչնչացնելու պալքարը յեղել ե, կա և այսուհետև ել կմաքանի գոյություն կունենան դասակարգերը: Այդ պայքարը հանմաւսարհային բուրժուազիայի պայքարի հիմնական յեվ անբաժան մասն ե ընդդեմ համաշխային պրոլետարիատի:

Յերկրորդը—այն ե, վոր խոշոր ինտերվենտների լակեյներ—փոքրիկ ինտերվենտները՝ Լեհաստանը, Ռումինիան և մյուսները կամենում եյին և կամենում են խլել մեր յերկրի հողամասերից կտորներ: Պրոմպարտիայի գործի ժամանակ դատարանում վասարար Յուրովսկին պատմեց, վոր Ռումինիան հույս ունի վերջնականապես հաստատել իր վրա գրավված Բեսարաբիան և ստանալ Ռումինիայի նավահանգիստը, իսկ Լեհաստանը նպատակ ունի ստանալու Ռումինիայի և Բելուստափայի նշանագոր մասը. Ֆինլանդիան յերազում ե «ձեռք բերել» Խորհրդային կարելիայի մի մասը և այլն:

Յեկ յերբորդը—վոր ինտերվենտները կամենում ե-  
յին ստեղծել սույնպիսի տնտեսական դրույուն Ռու-  
սաստանում, ինչպես որ յեղած եր:

Ոտարյերկրյա կապիտալը պատերազմից առաջ  
մուտք եր գործել Ռուսաստանում արդյունաբերության  
բոլոր խոշոր ճյուղերը: Ֆրանսիական կապիտալի մաս-  
նակցությունը ոռուսական արդյունաբերության մեջ  
համում եր 648 միլիոնի, անգլիացիների՝ 501 միլ.,  
և բելգիացիներինը՝ 314 միլ. իսկ ընդամենը ոտար-  
յերկրյա կապիտալիստների կողմից ոռուսական արդյու-  
նաբերության մեջ (նաևթ, քարածուխ և մետաղ) մուծ-  
ված եր 1.687 միլ. ռուբլի:

Շատ պարզ ե, վոր ինտերվենտները չեյին պատ-  
րաստվում վերականգնել միայն նախկին գրությունը  
Ռուսաստանում: Նրանց նպատակն եր դարձնել Ռուսաս-  
տանը գաղութ—մի յերկիր, վորտեղից կարելի լիներ  
դուրս քաշել եժան հում նյութ և շահագործել նրա  
եժան բանվորական ուժը: Դեռ 1922 թվին կանոնում  
հրավիրված կոնֆերենցիայում քննվեց համաշխարհային  
կոնսորցիում (տրեստների և մանավանդ բանկերի միու-  
թյուն) հիմնելու պրոյեկտը, Ռուսաստանը շահագործե-  
լու համար: Առյուծի բաժինը պիտն ընկներ Ֆրանսի-  
ային և Սնգլիային: Ֆրանսիական բանկիները կտա-  
նային մեզնից լրիվ իրենց պարտքերը վաշ-  
խառուական տոկոսներով և միենույն ժամանակ ոռու-  
սական քարածուխի, յերկաթե հանքերի, գործարան-  
ների, յերկաթուղիների տեր ու տիրական կդառնային:

Ռուսաստանի յուրաքանչյուր բուրժուական կա-  
ռավարությունն ուրախությամբ կտար ինտերվենտնե-  
րին յուղալի կտորներ, ինչպես արեց Կոլչակը 1919 թը-  
վին, հանձնելով ինտերվենտներին ամբողջ յերկաթու-  
ղին, իսկ սպիտակ գվարդիական ատաման Ս. մյունովը  
խոստացավ ճապոնացիներին տալ անդրբալկալյան բո-  
լոր վորէլու հանքեու:

Անգլիան գլխավորապես յերազում եր նավթի և  
Միջին-Ասիայի բամբակի մասին, այստեղ անգլիական  
բուրժուաների ախորժակը կրկնակի եր, նախ՝ սաւնալ  
եժան բամբակ և յերկրորդ՝ Ռուսաստանը զրկել այդ-  
բամբակից, այն ժամանակ Ռուսաստանը չեր կարող  
սեփական գործվածքներ արտադրել և ստիպված պի-  
տի լիներ գնելու Սնգլիայից:

Այսպես ուրեմն, զինված ինտերվենցիայի նպա-  
տակն եր՝ վոչնչացնել պրոլետարիատի դիկտատորան-  
և Ռուսաստանը գարձնել գաղութ, ստրուկների յերկիր,  
յենթարկված Յեվրոպայի կապիտալիստներին:

### 3ԵՐԵԿ ՅԵԿ ՎԱՂՀ

Բուրժուական պետությունների ինտերվենցիան  
Ռուսաստանում մեր թշնամիները համարում են պրո-  
լետարիատի զեմ մղվող համաշխարհային պայքարի մի  
մասը: Իսկ մեզ համար: Պայքարը ինտերվենցիայի զեմ  
հանդիսանում ե պրոլետարիատի համաշխարհային պայ-  
քարի մի մասը ընդգեմ բուրժուազիալի:

Այդ պայքարը շարունակվում ե: Շարունակվում ե  
ինտերվենցիան ևս: «Ինտերվենցիա» բառը նշանակում  
ե «միջամտություն»: Ինտերվենցիան կարող ե լինել  
և վոչ զինված: Միթե կապիտալիստների պայքարը մեր  
արտաքին առևտուրի զեմ, կամ թե մեր ապրանքների  
արտահանման արգելքը, միթե սա բռնի և կողիտ մի-  
ջամտություն չե մեր գործերի մեջ: Միթե սա ինտեր-  
վենցիա չե. իհարկե, սա իսկական ինտերվենցիա  
յե. իսկ այն փորձերը, վոր ստիպում են մեզ  
«հաշտվել» Զին-Արևելյան յերկաթուղագծի գրավիչ-  
ների հետ—միթե սա ինտերվենցիա չեր. իսկ Ֆրան-  
սիական բուրժուազիայի, նրա առաջնորդ Պուանկարեյի  
ու նրա հովանավորությամբ ոռու կապիտալիստների,  
լրտեսների և վնասարարների դատավարությունը-սա  
ինտերվենցիա չե:

Ինտերվենցիան — ոտարյերկրյա կապիտալիստների ու նրանց կառավարությունների միջամտումը մեր գործերի մեջ չի դադարել վոչ մի րոպե, վոչ մի որ և չի դադարելու, քանի դեռ խորտակված չե կապիտալիզմը։ Իսկ այժմ գործը հասնում ե զինված հարձակման, պատերազմի։

Իզուր չեր, վոր պարոնայք Ռամզինները ճանապարհ ելին հարթում պարոն ինտերվենտների համար և ոգնում ելին նրանց գտնել հարմար բանալիներ խորհղային դռների կողպեքները բանալու։ Իզուր չե, վոր ֆրանսիական ֆարբիկանտ Ֆուլքեռը և ոռւս գործարանատեր Խյարուշինսկին խոսում են Խորհրդային Միությունը վոչնչացնելու։ «Վիրաբուժական ոպերացիա կատարելու» անհրաժեշտության մասին, վորպեսզի դրանով բժշկեն հիվանդ կապիտալիստական աշխարհը։ Իզուր չե, վոր սպիտակ գվարդիականները բաց ե ի բաց, զինվորական տարազով Ֆրանսիայում պարագներ են կազմակերպում։ Այդ տականքները պիտի զնան «Հյուրերի» առջևից, յերբ նրանց տերերը կվորոշեն բաց թողնել շղթայից իրենց շներին։

Ճիշ ե, 1918-21 թվականներին ինտերվենտը սխալ հաշիվ բռնեցին, բայց հույս ունեն, վոր այս անգամ բախտը նրանց կը ժառանքող հուսան։ իսկ սենք խորը համոզված ենք, վոր նրանք այդ գործուս իրենց վիզը կը կոտրեն յեվ վոր այդ գործուս նրանց «կողմե» մեր դաշնակից ու մեր մարտական զինակից — համաշխարհային պրոլետարիատը։

Յերբ վնասարարների պրոցեսում պարզվեց, թե ինչպես ոտարյեկորյա բուրժուազիան պատրաստվում է հարձակվելու ԽՍՀՄ-ի վրա, շատ յերկրներում հազարավոր ոտարյերկորյա բանվորներ հայտարարեցին, վոր նրանք պատրաստ են կռվելու վոչ թե Խորհրդային Միության դեմ, այլ նրա հետ կողք-կողքի, բուրժուազիայի դեմ։ Ահա մի քանի որինակ —

Բանվորների ժողովը Բերլինում կեսլին փողոցի վրա (վորտեղ 1929 թվի մայիսի 1-ին պրոլետարիատը բարրիկադների վրա կռվում եր զոստիկանության դեմ) հայտարարում ե՝

«Մենք գիտենք, վոր վոչ միայն Ֆրանսիական ու անգլիական իմպերիալիստներն են սրում սրերը բանվորագյուղացիական պետության դեմ, այլ այդ գործում ուժեղ մասնակցություն են ցույց տալիս նաև գերմանական Փաշիստները։

Մենք, բարրիկադային կռվում մասնակցողներս կլինենք միջազգային կարմիր բանակի առաջին շարքերում, վորը պատերազմի դեպքում, Խորհրդային Միության պաշտպան կկանգնի։

Պրագայից (Զեխո-Մլավակիա) բանվորները գրում են հետեւյալ նամակը. «Բանվոր դասակարգը բավականին տանջանքներ կրեց իմպերիալիստական պատերազմի ժամանակ. մենք թույլ չենք տա, վոր հարձակվեն մի յերկրի վրա, վորտեղ իշխանության գլուխ են կանգնած բանվորները»։

Ֆրանսիական զինվորը գրում ե. «Մեզ մոտ-կազարմայում խոսում են վնասարարների դատավարության մասին։ Նույնիսկ անկուսակցական զինվորները հայտարարում են, վոր յեթե նրանք զենք վերցնեն, դուրս կդան վոչ թե ԽՍՀՄ-ի դեմ, այլ նրան պաշտպանելու համար։

Մինչև անգամ Ֆրանսիական բուրժուական մի թերթ («Բեսպուրլիկա») գրում ե. «Ֆրանսիայի ժողովրդական մասսան չի համաձայնվի, վոր նրան ուղարկեն Մոսկայի դեմ»։

Ֆրանսիայի և մյուս յերկրների բուրժուազիան հավատացած ե, վոր նրան կհաջողվի ուղարկել մեր դեմ վոչ թե իր, այլ Լեհաստանի և Ռումինիայի զորքերը, նաև ոռւսական սպիտակ գվարդիականներին, վորոնց թիվը արտասահմանում մեծ ե։ Բացի դրանից, շատ

620

յերկրներում կդտնվեն կամավորներ ոֆիցերներից և  
թափառաշրջիկներից:

Իսկ մեր հույսը մեր սեփական ուժի և համաշխար-  
հային պրոլետարիատի ոգնության վրա յեւ:

Բայց միայն հույսը և կամ համոզված լինելը քիչ  
է. հարկավոր ե նաև պատրաստ լինել. իսկ պատրաստ  
լինելը կայանում ե վոչ միայն զինված ուժի մեջ, այլ  
նա կախում ունի նաև և առաջ բանվորների և գյու-  
ղացիների նեղափական գիտակցությունից:

Մենք ցանկանում ենք խաղաղություն: Բայց մենք  
պետք ե լինենք ուժեղ, մենք պիտի լինենք պատրաստ,  
վորպեսզի պաշտպանվենք և հաղթենք:

Հեղափոխական բանվորներն ու գյուղացիները  
պիտի պատրաստ լինեն հարված տալու վոչ միայն «հյու-  
րերին»-ինտերվենտներին, այլ և նրանց բարեկամներին  
Խորհրդային Միության մեջ: Զե՞ վոր՝ մեզանում դեռ  
կան կուլակներ, քաղաքային բուրժուազիա, վնասարար-  
ներ, տերտերներ և մենշևիկների, եսերների ու մյուս  
հականեղափոխական կուսակցութույնների մնացորդներ:  
Հենց վոր զգան իրենց տերերի մոտենալը, նրանք բո-  
լորն ել կօւրժվեն և փորձ կանեն հարված հասցնել  
մեզ մեր սեփական տան մեջ: Խորհրդային տան այդ  
«բնակիչների», այդ լրտեսների ու մեր թենասու դաշնա-  
կիցների մասին մենք վոչ մի գեպքում չպիտի մոռա-  
նանք:



Ответственный редактор  
А. Г. Авакян  
Технический редактор  
Г. М. Маркарян

№ 2047  
1932

Сд. в набор 18/1—1932 г.  
Сд. в печать 23/III—19'2 г.  
Об'ем 1/2, печ. листа  
Тираж 2500 экз





На армянском языке

Г. Бергман

МЫ ПОМНИМ

(Цена интервенции)

Из-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԴԱՐԱՆԸ

ԱԼԱՍՊՈ-ԴՈՒ, ԱԼԻՎՈՎԻՉԱՅԻ ՓԼՀ, 53

ԳՐԱԿԵՆՑՈՒՄ (ԿՆԿՈՑԵՆՏՐ)